

ՄՐՑՈՒԹԱՅԻՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԸՆԴՀԱՆՈՒՐ ՆԿԱՐԱԳԻՐԸ

1.1. Մրցութային հանձնաժողովի գործողությունները մինչև թեստավորման փուլի սկիզբը

1. **Հանձնաժողովի նախագահը** նախապատրաստական աշխատանքներ իրականացնող համապատասխան տեղական ինքնակառավարման մարմնի աշխատակազմից **ստանում**¹ է՝

- մրցութային մասնակցելու համար դիմած յուրաքանչյուր քաղաքացու **փաստաթղթերի փաթեթը**, որը պետք է լինի համարակալված, կարված և կնքված,
- տվյալ թափուր **պաշտոնի անձնագրի** օրինակը,
- դիմորդների քանակին համապատասխան թվով **կնքված ամփոփաթերթեր** (երկու օրինակից),
- հանձնաժողովի անդամների **ներկայության թերթը**:

2. Հանձնաժողովի անդամները **ստորագրում** են ներկայության թերթը:

3. Հանձնաժողովը գումարում է **նիստ** և **քննության առում** ներկայացված փաստաթղթերը, որից հետո կայացնում է **որոշում**² մրցութային մասնակցելու թույլտվություն տալու կամ չտալու մասին: Նիստն **արձանագրվում**³ է լիազոր անձի կողմից:

Փաստաթղթերի քննության ընթացքում հանձնաժողովը պետք է ուսումնասիրի մրցութային մասնակիցներից յուրաքանչյուրի ներկայացրած փաստաթղթերի համապատասխանությունը և ամբողջականությունը՝ «Համայնքային ծառայության մասին» ՀՀ օրենսդրությամբ սահմանված պահանջներին: Ուսումնասիրության ընթացքում հանձնաժողովը պետք է պարզաբանի:

3.1. Արդյոք մրցութային դիմորդը հանդիսանում է ՀՀ քաղաքացի կամ ՀՀ փախստականի կարգավիճակ ունեցող անձ,

3.2. Արդյոք լրացել է մրցութային դիմորդի 18 տարին կամ չի լրացել վերջինիս 65-ը,

¹ Տե՛ս Հավելված 1, «Ստացական»:

² Տե՛ս Հավելված 1, Որոշումներ՝ «Մրցութային մասնակցելու թույլտվություն տալու մասին» և «Մրցութային մասնակցել չթույլատրելու մասին»:

³ Տե՛ս Հավելված 1, Արձանագրություն N1, 1-ին տարբերակ:

3.3. Արդյոք մրցույթի դիմորդի դիմումում կամ դրան կից ներկայացված հայտարարություններում առկա են «Համայնքային ծառայության մասին» ՀՀ օրենքի 12-րդ հոդվածով նախատեսված սահմանափակումներից որևէ մեկը, այն է՝

- արդյոք դիմումատուն չի տառապում ՀՀ կառավարության 2005 թվականի մարտի 3-ի N 310-Ն որոշմամբ հաստատված ցանկում ընդգրկված հիվանդություններից որևէ մեկով.
- արդյոք նա դատական կարգով չի ճանաչվել անգործունակ կամ սահմանափակ գործունակ.
- արդյոք նա տիրապետում է համայնքային ծառայության տվյալ պաշտոնի անձնագրով պահանջվող օտար լեզվին:

Բացի մրցույթի դիմորդի կողմից վերը նշված սահմանափակումների մասին արված հայտարարությունների ուսումնասիրումից անհրաժեշտ է նաև պարզել.

- արդյոք ոստիկանության մարմիններից հարցման միջոցով ստացված տեղեկանքում առկա չէ դիմորդի վերաբերյալ դատվածության մասին նշում: Եթե առկա է, ապա պետք է պարզել, թե արդյոք վերջինիս դատվածությունը⁴ սահմանված կարգով մարված կամ հանված չէ,
- արդյոք ոստիկանության մարմիններից ստացված տեղեկանքում առկա չէ նշում դիմորդին համայնքային ծառայության պաշտոն զբաղեցնելու իրավունքից զրկելու մասին,
- արդյոք արական սեռի անձինք չեն խուսափել ժամկետային զինվորական ծառայությունից⁵:

Եթե մրցույթի դիմորդը չի բավարարում 3.1, 3.2 և 3.3 կետերում ներկայացված պահանջները, ապա հանձնաժողովը, ղեկավարվելով ՀՀ տարածքային կառավարման նախարարի 2006 թվականի օգոստոսի 29-ի «Համայնքային ծառայության թափուր պաշտոն զբաղեցնելու համար մրցույթ անցկացնելու կարգը» հաստատելու մասին N13-Ն հրամանով հաստատված հավելվածի 20-րդ կետով, չի թույլատրում դիմորդին մասնակցել մրցույթին:

⁴ Դատվածության մարումը պարզելու համար պետք է ուսումնասիրել ՀՀ քրեական օրենսգրքի 84-րդ հոդվածը, իսկ դատվածությունը հանելու հանգամանքը պարզելու համար պետք է առկա լինի այդ մասին դատարանի համապատասխան որոշումը:

⁵ Ժամկետային զինվորական ծառայությունից խուսափելու հանգամանքը պարզվում է զինգրքուկի կամ դրան փոխարինող ժամանակավոր և զորակոչային տեղամասին կցագրման վկայականի պատճենները ուսումնասիրելու միջոցով:

3.4. Մրցույթի դիմորդը բավարարում է արդյոք համայնքային ծառայության տվյալ պաշտոնի անձնագրով նախատեսված աշխատանքային ստաժի և փորձի չափանիշներին, այն է՝

ա) համայնքային ծառայության գլխավոր պաշտոն

- արդյոք մրցույթի դիմորդն ունի բարձրագույն կրթություն կամ համապատասխան մասնագիտական բարձրագույն կրթություն, եթե այդպիսին սահմանված է համայնքային ծառայության տվյալ պաշտոնի անձնագրով: Եթե համայնքային ծառայության տվյալ պաշտոնի անձնագրով նախատեսված է որոշակի մասնագիտության (մասնագիտությունների) գծով բարձրագույն կրթություն (օրինակ՝ տնտեսագիտություն, իրավագիտություն և այլն), ապա մրցույթի դիմորդը պետք է պարտադիր ունենա այդ կրթությունը, հակառակ դեպքում վերջինս չի բավարարի տվյալ պաշտոնի անձնագրով նախատեսված բարձրագույն կրթության պահանջը.
- արդյոք մրցույթի դիմորդն ունի համայնքային ծառայության կամ քաղաքացիական ծառայության առաջատար պաշտոնների 2-րդ ենթախմբում առնվազն երկու տարվա ստաժ.
կամ
- արդյոք մրցույթի դիմորդն ունի առնվազն հինգ տարվա համայնքային ծառայության ստաժ և համայնքային ծառայության 2-րդ դասի առաջատար ծառայողի դասային աստիճան.
կամ
- արդյոք մրցույթի դիմորդն ունի վերջին երեք տարվա ընթացքում քաղաքական կամ հայեցողական պաշտոններում առնվազն մեկ տարվա աշխատանքային ստաժ.
կամ
- արդյոք մրցույթի դիմորդն ունի գիտական աստիճան և առնվազն երեք տարվա մասնագիտական աշխատանքային ստաժ.
կամ
- արդյոք մրցույթի դիմորդն (մինչև 2008 թվականի հունվարի 1-ը ընկած ժամանակահատվածը) ունի համայնքային կամ քաղաքացիական ծառայության առնվազն երեք տարվա աշխատանքային ստաժ.

բ) համայնքային ծառայության առաջատար պաշտոններ

- արդյոք մրցույթի դիմորդն ունի բարձրագույն կրթություն կամ համապատասխան մասնագիտական բարձրագույն կրթություն, եթե այդպիսին սահմանված է համայնքային ծառայության տվյալ պաշտոնի

անձնագրով: Եթե համայնքային ծառայության տվյալ պաշտոնի անձնագրով նախատեսված է որոշակի մասնագիտության (մասնագիտությունների) գծով բարձրագույն կրթություն (օրինակ՝ տնտեսագիտություն, իրավագիտություն և այլն), ապա մրցույթի դիմորդը պետք է պարտադիր ունենա այդ կրթությունը, հակառակ դեպքում վերջինս չի բավարարի տվյալ պաշտոնի անձնագրով նախատեսված բարձրագույն կրթության պահանջը.

- արդյոք մրցույթի դիմորդն ունի համայնքային կամ քաղաքացիական ծառայության պաշտոններում առնվազն երկու տարվա ստաժ. կամ
- արդյոք մրցույթի դիմորդն ունի վերջին երկու տարվա ընթացքում համայնքի ղեկավարի, ինչպես նաև հայեցողական պաշտոններում առնվազն մեկ տարվա աշխատանքային ստաժ. կամ
- արդյոք մրցույթի դիմորդն ունի առնվազն երեք տարվա մասնագիտական աշխատանքային ստաժ. կամ
- արդյոք մրցույթի դիմորդը (մինչև 2008 թվականի հունվարի 1-ը ընկած ժամանակահատվածը) ունի տեղական ինքնակառավարման մարմիններում կամ քաղաքացիական ծառայության առնվազն մեկ տարվա աշխատանքային ստաժ.

գ) համայնքային ծառայության կրտսեր պաշտոններ

- արդյոք մրցույթի դիմորդն ունի միջնակարգ կրթություն.

Եթե մրցույթի դիմորդն չի բավարարում համայնքային ծառայության տվյալ պաշտոնի անձնագրով նախատեսված աշխատանքային ստաժի և փորձի չափանիշներին, ապա հանձնաժողովը, ղեկավարվելով ՀՀ տարածքային կառավարման նախարարի 2006 թվականի օգոստոսի 29-ի «Համայնքային ծառայության թափուր պաշտոն զբաղեցնելու համար մրցույթ անցկացնելու կարգը» հաստատելու մասին N13-Ն հրամանով հաստատված հավելվածի 20-րդ կետով, չի թույլատրում դիմորդին մասնակցել մրցույթին:

3.5 Արդյոք մրցույթի դիմորդի կողմից ներկայացված փաստաթղթերն ամբողջական են, այն է՝

- առկա է արդյոք դիմումը՝ հասցեագրված մրցութային հանձնաժողովին՝ պաշտոնի նշումով, որին հավակնում է.

- առկա են արդյոք դիմորդի՝ համայնքային ծառայության տվյալ պաշտոնի անձնագրով այդ պաշտոնն զբաղեցնելու համար մասնագիտական գիտելիքների և աշխատանքային ունակությունների տիրապետմանը ներկայացվող պահանջների բավարարումը հավաստող փաստաթղթերի պատճենները (աշխատանքային գրքույկ կամ աշխատանքային գործունեությունը հավաստող փաստաթուղթ, բարձրագույն, իսկ կրտսեր պաշտոնների համար միջնակարգ կրթության մասին հավաստող ավարտական վկայականներ և այլն)։
- առկա է արդյոք դիմորդի հայտարարությունն այն մասին, որ ինքը չի տառապում ՀՀ կառավարության 2005 թվականի մարտի 3-ի N 310-Ն որոշմամբ հաստատված ցանկում ընդգրկված հիվանդություններից որևէ մեկով, որը համայնքային ծառայության պաշտոնում նշանակվելու դեպքում կարող է խոչընդոտել ծառայողական պարտականությունների կատարմանն ու լիազորությունների իրականացմանը։
- առկա է արդյոք դիմորդի հայտարարությունն այն մասին, որ ինքը դատական կարգով չի ճանաչվել անգործունակ կամ սահմանափակ գործունակ։
- առկա է արդյոք դիմորդի հայտարարությունն այն մասին, որ վերջինս տիրապետում է համայնքային ծառայության տվյալ պաշտոնի անձնագրով պահանջվող օտար լեզվին (լեզուներին)։
- առկա են արդյոք դիմորդի (արական սեռի) զինգրքույկի կամ դրան փոխարինող ժամանակավոր և զորակոչային տեղամասին կցագրման վկայականի պատճենները կամ համապատասխան տեղեկանքը։
- առկա է արդյոք դիմորդի անձնագրի պատճենը և արդյոք անձնագրի վավերականության ժամկետը անցած չէ։ Եթե վավերականության ժամկետն անցել է, ապա այն կհամարվի թերի փաստաթուղթ։

Եթե վերը նշված փաստաթղթերից որևէ մեկը բացակայում է կամ թերի է, ապա հանձնաժողովը, ղեկավարվելով ՀՀ տարածքային կառավարման նախարարի 2006 թվականի օգոստոսի 29-ի «Համայնքային ծառայության թափուր պաշտոն զբաղեցնելու համար մրցույթ անցկացնելու կարգը» հաստատելու մասին N13-Ն հրամանով հաստատված հավելվածի 20-րդ կետով, չի թույլատրում դիմորդին մասնակցել մրցույթին։

4. Հանձնաժողովն իր **որոշմամբ**⁶ հաստատում է մրցույթի մասնակիցների ցուցակը և այդ որոշումը **հրապարակում է** մինչև թեստավորման փուլի սկիզբը:

Այս որոշմամբ հաստատվում է մրցույթին մասնակցելու դիմած միայն այն քաղաքացիների ցուցակը, որոնց մրցութային հանձնաժողովն իր նախորդ որոշմամբ թույլատրել էր մասնակցելու մրցույթին:

5. Եթե հանձնաժողովը մրցույթին մասնակցելու դիմած քաղաքացիներից **ոչ մեկին չի թույլատրում** մասնակցել մրցույթին կամ եթե մրցույթին մասնակցելու դիմում ներկայացրած անձանցից **ոչ ոք չի ներկայացել**, ապա հանձնաժողովը ընդունում է **որոշում**⁷ «մրցույթը չկայացած համարելու մասին» և այդ որոշումն անմիջապես ուղարկում է համապատասխան **համայնքի ղեկավարին**:

Այդ մասին կազմվում է նաև համապատասխան **արձանագրություն**⁸:

6. Հանձնաժողովի նախագահը **ստուգում** և **ստորագրում է** ամփոփաթերթերը:

7. Հանձնաժողովը համակարգչում գետեղված հարցաշարից պատահական կարգով **ընտրում է** տվյալ մրցույթի թեստավորումն անցկացնելու համար հարցեր (խնդիրներ) և **կազմում** թեստեր հետևյալ չափաբաժիններով՝

- | | |
|------------------------------|------------------|
| ▪ գլխավոր պաշտոնների համար՝ | 40 հարց (խնդիր), |
| ▪ առաջատար պաշտոնների համար՝ | 30 հարց (խնդիր), |
| ▪ կրտսեր պաշտոնների համար՝ | 20 հարց (խնդիր): |

Հանձնաժողովը թեստերի հետ միասին համակարգչից դուրս է բերում նաև թեստավորման առաջադրանքների ճիշտ պատասխանների **ձևանմուշը**, որն անմիջապես **զցվում է** կնքված արկղի մեջ:

8. Լիազորված անձը **ստուգում է** մասնակցի ինքնությունը (անձը հաստատող փաստաթղթի միջոցով) և թույլատրում է նրան մուտք գործել թեստավորման սենյակ, որտեղ մասնակիցը կարող է զբաղեցնել ցանկացած ազատ նստարան: Մասնակիցների մուտքը սենյակ **դադարեցվում է** թեստավորումն սկսելուց **10 րոպե** առաջ:

Լիազորված անձը պետք է ուշադրություն դարձնի, որ մասնակիցներն իրենց հետ թեստավորման սենյակ չբերեն կապի միջոցներ, տպագիր, մեքենագիր, ձեռագիր նյութեր կամ այլ տեխնիկական սարքեր:

⁶ Տե՛ս Հավելված 1, Որոշում՝ «Մրցույթի մասնակիցների ցուցակը հաստատելու մասին»:

⁷ Տե՛ս Հավելված 1, Որոշում՝ «Մրցույթը չկայացած համարելու մասին»:

⁸ Տե՛ս Հավելված 1, Արձանագրություն N1, 2-րդ տարբերակ:

9. Լիազորված անձը մասնակիցներին բացատրում է թեստավորման հետ կապված տեխնիկական հարցերը և պատասխանում հարցերին:

Լիազորված անձը մասնակիցներին պետք է պարզաբանի թեստավորման առաջադրանքի էությունը, ինչպես նաև բացատրի առաջադրանքի կատարման հետ կապված բացատրի, որ.

- *մասնակիցների կողմից ամփոփաթերթերը ճիշտ լրացվեն, այսինքն՝ նշումները կատարվեն յուրաքանչյուր հարցի համար նախատեսված ճիշտ վանդակում՝ ընտրելով մեկ (իր կարծիքով՝ ճիշտ) պատասխանը,*
- *յուրաքանչյուր հարցի համար մեկից ավելի պատասխաններ նշելու, որևէ պատասխան չնշելու, ինչպես նաև ջնջումներ, ուղղումներ կամ վերականգնումներ կատարելու դեպքերում տվյալ պատասխանը կգնահատվի զրո միավոր,*
- *թեստավորման առաջադրանքների տեսքերում մասնակիցների կողմից կարող են կատարվել ցանկացած նշումներ, սակայն դրանք հիմք չեն հանդիսանալու թեստային աշխատանքները գնահատելիս, այլ հիմք են հանդիսանալու միայն ամփոփաթերթում կատարված նշումները,*
- *մասնակցի կողմից ամփոփաթերթի հիմնական մասի և կտրոնի վրայի անթափանց ծածկաշերտերը մաքրելու դեպքում թեստային աշխատանքը կգնահատվի զրո միավոր,*
- *թեստավորման ընթացքում մասնակցի կողմից սենյակը լքելու դեպքում թեստային աշխատանքը կհամարվի դադարեցված,*
- *թեստավորման ընթացքում մասնակիցներին չի թույլատրվում աղմկել, հուշել, խոսել, հարցեր տալ ներկա գտնվող անձանց, այդ թվում՝ հանձնաժողովի անդամներին,*
- *մասնակիցներին թեստային առաջադրանքները կատարելիս հատկացվում է համապատասխան ժամանակ (գլխավոր պաշտոններ՝ 50 րոպե, առաջատար պաշտոններ՝ 40 րոպե, կրտսեր պաշտոններ՝ 30 րոպե), և որ ժամանակի ավարտից 10 րոպե առաջ նրանց կհիշեցվի այդ մասին,*
- *թեստավորման համար հատկացված ժամանակի ավարտի մասին հայտարարությունից հետո մասնակիցները պարտավոր են անմիջապես դադարեցնել աշխատանքները, այլապես չդադարեցրած մասնակցի աշխատանքը կճանաչվի անվավեր և կգնահատվի զրո միավոր:*

Լիազորված անձը թեստավորման հետ կապված տեխնիկական հարցերը բացատրելուց հետո պետք է հավաստիանա, որ բոլոր մասնակիցները հասկացել են վերը նշված պարզաբանումները, ինչպես նաև առաջադրանքի էությունը:

10. Լիազորված անձը յուրաքանչյուր մասնակցին տալիս է ամփոփաթեթ՝ երկու օրինակից, որից հետո մասնակիցը հանձնաժողովի բոլոր անդամների ներկայությամբ, ներկայացնելով անձը հաստատող փաստաթուղթ, ամփոփաթեթի առաջին օրինակի կտրոնի վրա լրացնում է իր ազգանունը, անունը, հայրանունը և, այն անջատելով հիմնական մասից, **զցում է** ամփոփաթեթի պահպանման համար նախատեսված կնքված արկղի մեջ:

11. Գրավոր թեստավորման ժամանակ մասնակիցները կտրոնները հանձնելուց հետո ստանում են թեստավորման առաջադրանքների տետրը, իսկ **համակարգչի** միջոցով թեստավորման ժամանակ մասնակիցները կտրոններն արկղի մեջ զցելուց հետո թեստավորման առաջադրանքն ստանում են համակարգչի էկրանի վրա:

1.2. Մրցութային հանձնաժողովի գործողությունները թեստավորման փուլում

12. Լիազորված անձը թեստավորման առաջադրանքների տետրերը մասնակիցներին տրամադրելուց հետո **հայտարարում է** թեստավորման սկիզբը: Թեստավորման առաջադրանքները կատարելու համար մասնակիցներին տրվում է՝

- գլխավոր պաշտոններ՝ 50 րոպե,
- առաջատար պաշտոններ՝ 40 րոպե,
- կրտսեր պաշտոններ՝ 30 րոպե ժամանակ:

13. Լիազորված անձը թեստավորման ավարտից 10 րոպե առաջ այդ մասին **հիշեցնում է** մասնակիցներին:

14. Թեստային աշխատանքն ավարտելուց կամ թեստավորման համար հատկացված ժամանակը սպառվելուց հետո՝

ա) գրավոր թեստավորման ժամանակ.

մասնակիցն ամփոփաթեթի **առաջին օրինակի** հիմնական մասը **զցում է** կնքված արկղի մեջ, իսկ թեստավորման առաջադրանքների տետրը **հանձնում է** հանձնաժողովի անդամին: Մասնակիցը, աշխատանքը հանձնելիս, հանձնաժողովի նախագահին ներկայացնելով անձը հաստատող փաստաթուղթ, ամփոփաթեթի

Երկրորդ օրինակի կնքված մասում **լրացնում է** ազգանունը, անունը, հայրանունը, վերջնում այն և դուրս գալիս սենյակից.

բ) համակարգչի միջոցով թեստավորման ժամանակ.

մասնակիցը համակարգչով աշխատող օպերատորի օգնությամբ հանձնաժողովի նախագահի ներկայությամբ իր ամփոփաթերթի երկու օրինակների հիմնական մասերի վրա **տպում է** առաջադրանքի կատարման **արդյունքները** և համակարգչի կողմից կատարված վերլուծությունը՝ արտահայտված տոկոսներով: Մասնակիցն ամփոփաթերթի առաջին օրինակի հիմնական մասը **զցում է** կնքված արկղի մեջ և հանձնաժողովի նախագահին ներկայացնելով անձը հաստատող փաստաթուղթ՝ ամփոփաթերթի **Երկրորդ օրինակի** կնքված մասում **լրացնում է** ազգանունը, անունը, հայրանունը, **վերջնում** այն և դուրս գալիս սենյակից:

15. Հանձնաժողովի անդամներն **ստուգում են** ամփոփաթերթերի պահպանման համար նախատեսված արկղի կնիքի ամբողջականությունը, որից հետո բացում են արկղը և **հաշվում** ամփոփաթերթերի կտրոնների և հիմնական մասերի քանակը՝ կազմելով **արձանագրություն**⁹:

16. Հանձնաժողովի անդամներն **ստուգում են** գրավոր աշխատանքները:

Աշխատանքները կարող են ստուգվել համակարգչի միջոցով, իսկ դրա բացակայության դեպքում՝ թեստային առաջադրանքների ճիշտ պատասխանների ձևանմուշի միջոցով:

Ստուգում համակարգչի միջոցով

Համակարգչով գրավոր աշխատանքներն ստուգելու համար ամփոփաթերթերի հիմնական մասերը հանձնվում են համակարգչով աշխատող օպերատորին, որը սկանների միջոցով մուտքագրում է յուրաքանչյուր մասնակցի ամփոփաթերթի պատասխանների տվյալները: Համակարգչային ծրագիրը կատարում է տվյալ ամփոփաթերթերի պատասխանների վերլուծություն և էկրանի վրա դուրս է բերում արդյունքը՝ արտահայտված տոկոսով: Արդյունքը տպվում է ամփոփաթերթի հիմնական մասի վրա և հաստատվում հանձնաժողովի նախագահի ստորագրությամբ:

Ստուգում թեստային առաջադրանքների ճիշտ պատասխանների ձևանմուշի միջոցով

⁹ Տե՛ս Հավելված 1, Արձանագրություն N2:

Տեխնիկական պայմանների բացակայության դեպքում գրավոր աշխատանքներն ստուգվում են թեստերի հետ միաժամանակ համակարգչի միջոցով դուրս բերված և մինչև թեստավորում անցկացնելը կնքված արկղում գետեղված թեստավորման առաջադրանքների ճիշտ պատասխանների ձևանմուշի միջոցով: Հանձնաժողովի անդամները համատեղ, ձևանմուշի միջոցով, մեկ առ մեկ ստուգում են մասնակիցների կողմից ամփոփաթեթերում նշված պատասխանները և յուրաքանչյուր մասնակցի համար հաշվարկում հավաքած միավորների թիվը և տոկոսը, որը հաստատվում է հանձնաժողովի նախագահի ստորագրությամբ:

Թեստավորման արդյունքների յուրաքանչյուր ճիշտ պատասխան գնահատվում է մեկ, իսկ սխալ պատասխանը՝ զրո միավոր:

17. Ստուգման աշխատանքներն ավարտելուց հետո բոլոր մասնակիցները **հրավիրվում են** թեստավորման սենյակ:

18. Հանձնաժողովի նախագահի կողմից մեկ առ մեկ մաքրվում են ամփոփաթեթերի հիմնական **մասերի** ծածկաշերտերը: Յուրաքանչյուր հիմնական մասի ծածկաշերտը մաքրելուց հետո բարձրաձայն հայտարարվում է ամփոփաթեթի **համարը** և դրա վրա նշված **տոկոսը**, ինչն անմիջապես **արձանագրվում**¹⁰ է լիազորված անձի կողմից:

19. Բոլոր ամփոփաթեթերի **համարները** և դրանց վրա նշված **տոկոսները** հայտարարելուց հետո հանձնաժողովի նախագահը մեկ առ մեկ բարձրաձայն **ընթերցում է** ամփոփաթեթերի կտրոնների վրա նշված ազգանունը, անունը, հայրանունը: Յուրաքանչյուր մասնակից ներկայացնում է իր անձը հաստատող փաստաթուղթը, ստանում է իր կտրոնը, հանձնաժողովի անդամների ներկայությամբ **մաքրում ծածկաշերտը** և բարձրաձայն հայտնում իր կտրոնի **համարը**, ինչն ամիջապես **արձանագրվում**¹¹ է:

Չներկայացած մասնակիցների կտրոնների ծածկաշերտերը նույնպես բացվում են բոլորի ներկայությամբ՝ հանձնաժողովի նախագահի կողմից, բարձրաձայն հայտարարվում են և **արձանագրվում**¹², որից հետո հանձնաժողովի նախագահը հայտարարում է յուրաքանչյուր մասնակցի հավաքած **միավորները (տոկոսները)**:

20. Մասնակիցների հավաքած **միավորները (տոկոսները)** հայտարարելուց անմիջապես հետո հանձնաժողովը համապատասխան ցուցանակի վրա **հրապարակում է** թեստավորման առաջադրանքների ճիշտ պատասխանների **ձևանմուշը**:

¹⁰ Տե՛ս Հավելված 1, Արձանագրություն N3:

¹¹ Տե՛ս Հավելված 1, Արձանագրություն N3:

¹² Տե՛ս Հավելված 1, Արձանագրություն N3:

21. Բողոքարկման համար նախատեսված ժամանակի ավարտից հետո¹³, հանձնաժողովը համապատասխան ցուցանակի վրա **հրապարակում է մրցույթի հաջորդ՝ հարցազրույցի փուլ** անցած մասնակիցների **ցուցակը**¹⁴, որից հետո ընդունում է **որոշում**¹⁵ «հարցազրույցը թեստավորման ավարտից հետո նույն օրը կամ հաջորդ օրն անցկացնելու մասին»:

22. Եթե մասնակիցներից ոչ մեկը թեստավորման առաջադրանքների առնվազն **75 տոկոսին ճիշտ պատասխան չի տվել**, ինչպես նաև թեստավորման առաջադրանքների առնվազն 75 տոկոսին ճիշտ պատասխան տված միակ մասնակիցը կամ բոլոր մասնակիցները գրավոր կամ բանավոր **հրաժարվել են հարցազրույցի փուլին մասնակցելուց**, ապա հանձնաժողովն ընդունում է **որոշում**¹⁶ «Մրցույթի արդյունքում հաղթող չճանաչելու մասին» և այդ որոշումն անմիջապես ուղարկում է համապատասխան համայնքի ղեկավարին:

¹³ Թեստավորման առաջադրանքների ճիշտ պատասխանների ձևանմուշը համապատասխան ցուցանակի վրա հրապարակելուց մեկ ժամ հետո:

¹⁴ Տե՛ս Հավելված 1, Ցուցակ՝ «Հարցազրույցի փուլ անցած մասնակիցների »:

¹⁵ Տե՛ս Հավելված 1, Որոշում՝ « Հարցազրույցը թեստավորման ավարտից հետո նույն օրը կամ հաջորդ օրն անցկացնելու մասին »:

¹⁶ Տե՛ս Հավելված 1, Որոշում՝ «Մրցույթի արդյունքում հաղթող չճանաչելու մասին», 1-ին տարբերակ:

1.3. Մրցութային հանձնաժողովի գործողությունները հարցազրույցի փուլում

23. Հարցազրույցին մասնակցելու իրավունք ունեցող մասնակիցների հետ, **առանձին-առանձին**, համայնքային ծառայության տվյալ **պաշտոնի անձնագրի դրույթների շրջանակներում** նրանց գործնական կարողություններն ստուգելու նպատակով անցկացվում է հարցազրույց, որի ընթացքն **արձանագրվում**¹⁷ է:

Արձանագրության մեջ առնվազն նշվում է՝

- *հանձնաժողովի անդամների կողմից տրված յուրաքանչյուր հարցը,*
- *հանձնաժողովի անդամների կողմից տրված յուրաքանչյուր հարցի վերաբերյալ մասնակցի պատասխանը,*
- *մասնակցի պատասխանի վերաբերյալ հարց տված հանձնաժողովի անդամի գնահատականը՝ դրա ճիշտ կամ սխալ լինելու մասին, իսկ սխալ պատասխանի դեպքում՝ հանձնաժողովի անդամի հայտարարած ճիշտ պատասխանը,*
- *հարց տվող հանձնաժողովի անդամի անունը և ազգանունը:*

24. Յուրաքանչյուր մասնակցի հետ հարցազրույցն ավարտելուց հետո հանձնաժողովի յուրաքանչյուր անդամ մասնակցի պատասխանը գնահատում է **20 բալային** համակարգով՝ **մասնակիցների գործնական կարողությունների գնահատման թերթում**¹⁸ գաղտնիության պայմաններում:

Գնահատելիս հանձնաժողովի անդամները պետք է կատարեն միայն մեկ նշում համապատասխան «բալի» դիմաց գտնվող վանդակում, հակառակ դեպքում (մեկից ավելի նշումներ կատարելու դեպքում) հնարավոր չի լինի պարզել թե հանձնաժողովի անդամը մասնակցի գործնական կարողությունները քանի բալ է գնահատել:

Անհրաժեշտ է նաև, որ մասնակիցների գործնական կարողությունների գնահատման թերթերը, մասնակցի հետ հարցազրույցից հետո, հանձնաժողովի անդամներին տրամադրելուց առաջ ստորագրվի և կնքվի հանձնաժողովի նախագահի կողմից, ինչը կհաստատի գնահատման թերթի վավերականությունը որպես փաստաթուղթ:

¹⁷ Տե՛ս Հավելված 1, Արձանագրություն N4: Այս արձանագրությունը կազմվում է յուրաքանչյուր մասնակցի համար առանձին և կախված մասնակիցների քանակից համապատասխանաբար համարակալվում է՝ N4/1, N4/2, N4/3 և այլն:

¹⁸ Տե՛ս Հավելված 1, «Մասնակիցների գործնական կարողությունների գնահատման թերթ»:

25. Հանձնաժողովը յուրաքանչյուր մասնակցի հետ հարցազրույցն ավարտելուց հետո **հաշվարկում է տվյալ մասնակցի ստացած դրական բալերի ընդհանուր թիվը**, որի վերաբերյալ կազմվում է **արձանագրություն**¹⁹:

26. Բոլոր մասնակիցների հետ հարցազրույց անցկացնելուց հետո մասնակիցները հրավիրվում են հարցազրույցի անցկացման սենյակ, որից հետո հանձնաժողովի նախագահը **հայտարարում է յուրաքանչյուր մասնակցի ազգանունը, անունը, հայրանունը և ստացած դրական բալերի թիվը**: Հանձնաժողովի նախագահի հայտարարություններն **արձանագրվում**²⁰ են լիազորված անձի կողմից:

1.4. Մրցութային հանձնաժողովի գործողությունները մրցույթի արդյունքների հրապարակման փուլում

27. Մրցույթի **հաղթող է ճանաչվում առավել բարձր դրական բալեր** հավաքած մասնակիցը: Եթե երկու կամ ավելի մասնակիցներ են հավաքել հավասար առավել բարձր դրական բալեր, ապա նրանք **բոլորը մրցույթի հաղթող են ճանաչվում**, իսկ եթե մասնակիցներից **ոչ մեկը** քվեարկության արդյունքում **չի գնահատվել դրական բալով**, ապա հանձնաժողովը **որոշում**²¹ է ընդունում «մրցույթի արդյունքում հաղթող չճանաչելու մասին» և այդ որոշումն անմիջապես ուղարկում է համապատասխան **համայնքի ղեկավարին**:

28. Եթե մրցույթի արդյունքում մասնակիցներից որևէ մեկը կամ մի քանիսը հաղթող են ճանաչվում, ապա մրցույթն անցկացնելուց հետո՝ նույն օրը, մրցույթի արդյունքում **հաղթող ճանաչված մասնակցի** (մասնակիցների) մասին կազմվում է **եզրակացություն**²², որից հետո **հրապարակվում են** մրցույթի արդյունքները՝ կազմելով «**մրցույթի արդյունքների հրապարակման թերթիկ**²³»:

Եզրակացությունը պետք է ստորագրեն հանձնաժողովի նախագահը, հանձնաժողովի անդամները և լիազորված անձը: Եզրակացության մեջ պետք է նշվեն՝

- *համայնքային ծառայության թափուր պաշտոնի անվանումը, որն զբաղեցնելու համար անցկացվել է մրցույթը.*
- *մրցույթի անցկացման տարեթիվը, ամիսը, ամսաթիվը և վայրը.*

¹⁹ Տե՛ս Զավելված 1, Արձանագրություն N5:

²⁰ Տե՛ս Զավելված 1, Արձանագրություն N5:

²¹ Տե՛ս Զավելված 1, Որոշում՝ «Մրցույթի արդյունքում հաղթող չճանաչելու մասին», 2-րդ տարբերակ:

²² Տե՛ս Զավելված 1, «Եզրակացություն»:

²³ Տե՛ս Զավելված 1, «Մրցույթի արդյունքների հրապարակման թերթիկ»:

- *հաղթող ճանաչված մասնակցի (մասնակիցների) ազգանունը, անունը, հայրանունը՝ ըստ այբբենական կարգի, ծննդյան տարեթիվը, ամիսը, ամսաթիվը.*
- *հաղթող ճանաչված մասնակցի (հաղթող ճանաչված մասնակիցներից յուրաքանչյուրի) հավաքած միավորների թիվը (տոկոսը) թեստավորման փուլում.*
- *հաղթող ճանաչված մասնակցի (հաղթող ճանաչված մասնակիցներից յուրաքանչյուրի) վերաբերյալ հարցազրույցի արդյունքում հանձնաժողովի հաշվարկած ընդհանուր բալային թիվը:*

Հատուկ կարծիք ունեցող հանձնաժողովի անդամը (անդամները) եզրակացությունն ստորագրելիս ստորագրության կողքին գրառում են «հատուկ կարծիքը կցվում է» բառերը, որից հետո եզրակացությանը կցվում են հանձնաժողովի անդամի (անդամների) գրավոր հատուկ կարծիքները:

Եզրակացությանը կից ներկայացվում են նաև մրցույթի արդյունքում հաղթող ճանաչված մասնակցի (մասնակիցների) աշխատանքային գրքույկի պատճենները (բացառությամբ առաջին անգամ աշխատանքի ընդունվողների):

Մրցույթի արդյունքների հրապարակման թերթիկն ստորագրում է հանձնաժողովի նախագահը, որում նշվում են՝

- *համապատասխան համայնքի անվանումը և համայնքային ծառայության թափուր պաշտոնի անվանումը, որն զբաղեցնելու համար անցկացվել է մրցույթը.*
- *մրցույթի անցկացման տարին, ամիսը, ամսաթիվը և վայրը, ինչպես նաև մրցույթի արդյունքների հրապարակման տարեթիվը, ամիսը, ամսաթիվը և ժամը.*
- *մրցույթի արդյունքում հաղթող ճանաչված մասնակցի (մասնակիցների) ազգանունը, անունը, հայրանունը:*

29. Մրցույթի արդյունքները հրապարակելուց հետո **մեկ ժամվա** ընթացքում ինչպես **մասնակիցը** (իր արդյունքների մասով), այնպես էլ **հանձնաժողովի անդամը** կարող են բողոքարկել մրցույթի արդյունքները՝ գրավոր դիմում ներկայացնելով հանձնաժողովին, որն այն ստանալուց հետո **երկու ժամվա** ընթացքում ընդունում է

որոշում`²⁴ անհրաժեշտության դեպքում փոփոխելով եզրակացությունը և մրցույթի արդյունքների հրապարակման թերթիկը:

30. Հանձնաժողովի աշխատանքները համարվում են **ավարտված`** եզրակացությունը մրցույթի նախապատրաստական աշխատանքներ իրականացնող աշխատակազմ հանձնելուց հետո, ինչպես նաև հանձնաժողովի կողմից «մրցույթը չկայացած համարելու մասին» և «մրցույթի արդյունքում հաղթող չճանաչելու մասին» որոշումներ ընդունելու դեպքերում:

31. Աշխատանքներն ավարտելուց հետո հանձնաժողովի նախագահը մրցույթի նախապատրաստական աշխատանքներ իրականացնող աշխատակազմին **անմիջապես հանձնում է** դիմորդների համար ստացած, սակայն չօգտագործված ամփոփաթերթերը:

32. Հանձնաժողովը **հանձնման ակտով²⁵** մրցույթի նախապատրաստական աշխատանքներ իրականացնող աշխատակազմին փոխանցում է **մրցութային փաթեթը**, որը մասնակիցների կողմից ներկայացրած փաստաթղթերից բացի ներառում է նաև հանձնաժողովի կողմից կազմված և (կամ) ընդունված փաստաթղթերն ու նյութերը:

Հանձնաժողովի կողմից կազմված և (կամ) ընդունված փաստաթղթերն ու նյութերն են.

- *դիմորդների թվին համապատասխան թվով ամփոփաթերթերի ստացման մասին տեղեկանքը.*
- *փաստաթղթերի քննարկման և դիմորդների ու հանձնաժողովի անդամների ներկայության մասին արձանագրությունը.*
- *մրցութային մասնակցելը թույլատրելու և (կամ) չթույլատրելու մասին որոշումը.*
- *մրցույթի մասնակիցների ցուցակը հաստատելու մասին որոշումը.*
- *ամփոփաթերթի ծածկաշերտի թերությունների մասին (այդպիսիք լինելու դեպքում) արձանագրությունը.*
- *հանձնաժողովի կողմից ամփոփաթերթերի համար նախատեսված արկղն ստուգելու, արկղը բացելու և արկղից դուրս բերված ամփոփաթերթերի*

²⁴ Տե՛ս Հավելված 1, Որոշումներ` «Մրցույթի արդյունքներն անփոփոխ թողնելու մասին» և «Մրցույթի արդյունքները փոփոխելու մասին»:

²⁵ Տե՛ս Հավելված 1, «Հանձնման ակտ»:

հիմնական մասերի, կտրոնների ու թեստավորման առաջադրանքների ճիշտ պատասխանների ձևանմուշի մասին արձանագրությունը.

- *թեստավորման արդյունքներն ամփոփելու մասին արձանագրությունը.*
- *հարցազրույցի փուլ անցած մասնակիցների ցուցակը.*
- *թեստավորման ավարտից հետո հարցազրույցն անցկացնելու օրվա մասին որոշումը.*
- *հանձնաժողովի անդամի՝ հարցազրույցի փուլից բացակայելու մասին (այդպիսիք լինելու դեպքում) արձանագրությունը.*
- *մասնակցի հարցազրույցին մասնակցելուց հրաժարվելու կամ չներկայանալու մասին (այդպիսին լինելու դեպքում) արձանագրությունը.*
- *մասնակիցների հետ հարցազրույց անցկացնելու մասին արձանագրությունները.*
- *հարցազրույցի փուլում յուրաքանչյուր մասնակցի ստացած գնահատականի մասին արձանագրությունը.*
- *մրցույթի արդյունքում ոչ մի մասնակցի հաղթող չճանաչելու մասին որոշումը.*
- *մրցույթի արդյունքում հաղթող ճանաչված մասնակցի (մասնակիցների) մասին եզրակացությունը.*
- *մրցույթը չկայացած համարելու մասին որոշումը.*
- *թեստավորման առաջադրանքների տեսրերը.*
- *թեստավորման առաջադրանքների ճիշտ պատասխանների ձևանմուշը.*
- *մրցույթի արդյունքների հրապարակման թերթիկը:*

33. Եթե մրցույթի արդյունքների հրապարակումից հետո հանձնաժողովին **գրավոր բողոք չի ներկայացվում**, ապա նախապատրաստական աշխատանքներ իրականացնող աշխատակազմը կազմում է գրավոր բողոքի բացակայության մասին **տեղեկանք**²⁶, որը կցվում է մրցութային փաթեթին:

²⁶ Տե՛ս Հավելված 1, Տեղեկանք՝ «Մրցույթի արդյունքների գրավոր բողոքի բացակայության մասին»:

ՀԱՎԵԼՎԱԾՆԵՐ

ՀԱՎԵԼՎԱԾ 1

Մրցութային հանձնաժողովի որոշումների,
արձանագրությունների և այլ փաստաթղթերի նմուշներ

ՈՐՈՇՈՒՄՆԵՐԻ ՆՄՈՒՇՆԵՐ

Հանձնաժողովի որոշումները համարակալվում են ըստ ընդունման հերթականության



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ (համապատասխան համայնքի անվանումը)
ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ (ստորաբաժանման անվանումը և թափուր
պաշտոնի անվանումը) (պաշտոնի կոդը) **ԹԱՓՈՒՐ ՊԱՇՏՈՆ ԶԲԱՂԵՑՆԵԼՈՒ**
ՀԱՄԱՐ ՄՐՑՈՒՅԹ ԱՆՑԿԱՑՆՈՂ ՄՐՑՈՒԹԱՅԻՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

Ո Ր Ո Շ ՈՒ Մ Ն

« » ----- 2008 թ.

(համապատասխան բնակավայրի՝ քաղաքի կամ գյուղի անվանումը)

ՄՐՑՈՒՅԹԻՆ ՄԱՍՆԱԿՑԵԼ ԶԹՈՒՅԼԱՏՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Համայնքային ծառայության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 14-րդ հոդվածի 4-րդ մասի, Հայաստանի Հանրապետության տարածքային կառավարման նախարարի 2006 թվականի օգոստոսի 29-ի «Համայնքային ծառայության թափուր պաշտոն զբաղեցնելու համար մրցույթ անցկացնելու կարգը» հաստատելու մասին N13-Ն հրամանով հաստատված հավելվածի 20-րդ կետի առաջին պարբերության պահանջներով, մրցութային հանձնաժողովը **ո ր ո շ ու մ է.**

1. Կարեն Գուրգենի Պետրոսյանին և Կարապետ Մովսեսի Կարապետյանին չթույլատրել մասնակցելու մրցույթին՝ նկատի ունենալով, որ նրանք չունեն տվյալ պաշտոնի անձնագրով սահմանված համապատասխան աշխատանքային ստաժ (կարող են լինել նաև օրենսդրությամբ նախատեսված այլ հիմքեր, օրինակ՝ բարձրագույն կրթության

բացակայություն՝ գլխավոր կամ առաջատար պաշտոնների համար, ներկայացված փաստաթղթերի թերի լինելու հանգամանք և այլն: Տես ՀՀ տարածքային կառավարման նախարարի 2006 թվականի օգոստոսի 29-ի «Համայնքային ծառայության թափուր պաշտոն զբաղեցնելու համար մրցույթ անցկացնելու կարգը» հաստատելու մասին N13-Ն հրամանով հաստատված հավելվածի 20-րդ կետը:)

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԱԽԱԳԱՀ

(ստորագրություն)

(անուն, ազգանուն)



